ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա. Հայրապետը հուլիսի 4-ից 20-ը եղավ Ստամբուլում: Նորին Սրբությունը հուլիսի 7-ին կատարեց վերջին օծումը հանգուցյալ Գարեգին Սրբազան Պատրիարքի և ապա, մինչև Իր մեկնումը, սրբազան արարողություններով և կենդանի խոսքով մխիթարեց և օրհնեց թուրքահայ հավատացյալ ժողովրդին:

Հուլիսի 18-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Թուրքիայի Հանրապետության Նախագահ գեներալ Ջեմալ Գյուրսելին: Եղավ սիրալիր ընդունելություն:

Նորին Վեհափառությունը սրտագին հանդիպումներ ունեցավ Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի հետ՝ առավել ամրապնդելով դարավոր բարեկամական կապերը քույր եկեղեցիների միջև:

Վեհափառ Հայրապետը վերադարձին, հուլիսի 20—25-ին, այցելեց Վիեննայի հայ համայնքին՝ Իր օրհնությունները բաշխելով հավատացյալ ժողովրդին: Հուլիսի 21-ին Նորին Ս. Օծությունը այցելեց Ավստրիայի վարչապետ դոկտ. Գորբախին: Ընդունելությունը եղավ ջերմ:

Հուլիսի 22-ին Վեհափառ Հայրապետը Աբբահոր հրավերով հյուրը եղավ Վիեննայի Մխիթարյան ուխտին և Իր օրհնությունը տվեց միաբանության և նրա կատարած ազգանվեր գործին:

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա. Կաթողիկոսը հուլիսի 27-ին Իր շքախմբով վերադարձավ Ս. Էջմիածին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

29 հուլիսի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ